ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀՐԱՄԱՆ

№ 196/61 «21» 10 2021թ.

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԴԻՊԼՈՄԻ ԿՐԿՆՕՐԻՆԱԿԸ ՏԱԼՈՒ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 56-րդ կետի 10-րդ ենթակետով.

հրամայում եմ

1. Սահմանել, որ Երևանի պետական համալսարանի դիպլոմի կրկնօրինակ տրվում է դիպլոմը կորցնելու, դիպլոմի վնասված լինելու, դիպլոմում վրիպակի առկայության կամ օրենքով սահմանված կարգով շրջանավարտի անվան (ներառյալ ազգանվան և հայրանվան) փոխման դեպքերում:

2. Դիպլոմի կրկնօրինակ տրամադրելու համար շրջանավարտն անձամբ, կամ լիազորված անձի միջոցով ներկայացնում է դիմում՝ հասցեագրված ԵՊՀ ռեկտորին, շրջանավարտի անձնագրի պատճենը, անձնագրում բացակայող օտար լեզվով շրջանավարտի անվան գրառման հաստատված (դիմողի կողմից) նմուշը, վճարման անդորրագիրը և համապատասխանաբար հետևյալ փաստաթղթերը.

1) դիպլոմի կորստյան դեպքում՝ դրա վերաբերյալ թերթում, կամ առցանց լրատվամիջոցում տրված հայտարարության պատճենը, դիպլոմը գողանալու դեպքում նաև տեղեկանք ՀՀ ոստիկանությունից՝ այդ մասին հաղորդում տալու վերաբերյալ,

2) շրջանավարտի անվան փոխման դեպքում՝ անվան փոխման պետական վկայականի պատճենը և նախկին անվամբ տրված դիպլոմը,

3) դիպլոմը վնասելու դեպքում՝ վնասված դիպլոմը:

3. Դիպլոմի կրկնօրինակը տրվում է վճարովի հիմունքներով, բացառությամբ այն դեպքի, երբ դիպլոմում առկա է վրիպակ, որը թույլ է տրվել այն լրացնող ԵՊՀ աշխատողի մեղքով:

ԵՊՀ հիմնական աշխատողներին դիպլոմի կրկնօրինակը տրվում է անվճար՝ անկախ պատճառներից:

Դիպլոմի կրկնօրինակ տալու վճարաչափը սահմանվում է ԵՊՀ ռեկտորի հրամանով:

4. Դիպլոմի կրկնօրինակը տրվում է ԵՊՀ ռեկտորի հրամանով, որով միաժամանակ անվավեր է ճանաչվում նախկինում տրված դիպլոմը (հրամանում պարտադիր նշվում է անվավեր ճանաչված դիպլոմի համարը):

5. Դիպլոմի կրկնօրինակը տրվում է դիմումը՝ կից փաստաթղթերով ներկայացնելուց հետո հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

ԵՊՀ ՌԵԿՏՈՐԻ
ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Հ. Հովհաննիսյան Հ. Կ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ